

“Ագրոլիզինգ ԼՎԿ” ՍՊԸ

փաստացի տարեկան տոկոսադրույքի հաշվարկի օրինակ

Հարգելի հաճախորդ, տարեկան անվանական տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը հայտարարվում է ֆինանսական կազմակերպության կողմից և որի հիման վրա հաշվարկվում են վարկառուի կողմից վճարվելիք տոկոսագումարների չափը:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կլինի տարեկան անվանական տոկոսադրույքը, եթե վերջինս իր մեջ ներառեր վարկի տրամադրման և սպասարկման գծով բոլոր պարտադիր վճարները:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է հետևյալ բանաձևի միջոցով`

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{Dn/365}}$$

որտեղ`

i - տարեկան փաստացի տոկոսադրույքն է

A - տրամադրվող միջոցի սկզբնական գումարն է

n - միջոցի մարմանն ուղղված վճարի հերթական համարն է

K n - վարկառուի կողմից միջոցի ստացման պահին և (կամ) միջոցի գործողության ընթացքում կատարված հերթական n-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ, և(կամ) այլ վճարումներ)

Dn- ցույց է տալիս վարկի ստացման (վարկային պայմանագրի կնքման) օրվանից մինչև վարկի գումարի հերթական n-րդ մարման օրը ներառյալ, ընդ որում վարկի տրամադրման օրը չի ներառվում հաշվարկում:

Զեղ ենք ներկայացնում **տարեկան փաստացի տոկոսադրույքի** հաշվարկի օրինակներ`

ա. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿ

Տրամադրվող վարկի գումար	5 000 000 ՀՀ դրամ
Վարկի մարման ժամկետ	36 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	20%
Վարկի մարման ձև	Ամենամսյա հավասարաչափ վճարումներ, որը տվյալ դեպքում կկազմի 185 614.17 ՀՀ դրամ
Մինչև վարկի տրամադրումը վարկառուի կողմից կատարված ծախսեր, որոնք կապված են վարկի ձևակերպման հետ	Գրավի առարկայի գնահատում – 15000 դր նոտարական ծախսեր – 12000 դրամ Պետական գրանցման ծախսեր – 18000 դր Ապահովագրություն – 10000 դր
Վարկի տրամադրումից հետո վարկառուի կողմից կատարված ծախսեր, որոնք կապված են վարկի սպասարկման հետ	Վարկի կանխիկացման վճար – 100000 դր Վարկի սպասարկման ամսական վճար – 10000 դր

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 28.91%

բ. ՄԻԱՅՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿ

Տրամադրվող վարկի գումար	500 000 ՀՀ դրամ
Վարկի մարման ժամկետ	24 ամիս
Տարեկան անվանական տոկոսադրույք	20%
Վարկի մարման ձև	Ամենամսյա հավասարաչափ վճարումներ, որը տվյալ դեպքում կկազմի 25428.36 դրամ
Մինչ վարկի տրամադրումը վարկառուի կողմից կատարված ծախսեր, որոնք կապված են վարկի ձևակերպման հետ	Գրավի առարկայի գնահատում –0 դր Նոտարական ծախսեր –0 դրամ Պետական գրանցման ծախսեր –0 դր Ապահովագրություն –0 դր
Վարկի տրամադրումից հետո վարկառուի կողմից կատարված ծախսեր, որոնք կապված են վարկի սպասարկման հետ	Վարկի կանխիկացման վճար – 10000 դր Վարկի սպասարկման ամսական վճար – 1000 դր

Վերը նշված վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքի մեծությունը կկազմի 28.79%